ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/91

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Լենտեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ս. Աստոյանի (լիազորագիր, տրված՝ 19.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ 26/9726-2019 գրությամբ «Լենտեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության զորքերի 07.06.2019թ. թիվ 01.2/14241-19 գրության հիման վրա, 11.06.2019թ. թիվ 26/9726-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լենտեքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լենտեքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լենտեքս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ոստիկանության զորքերի կողմից (հետայսու՝ Պատվիրատու) 22.04.2019թ. հայտարարված «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/10/ԱԲ/5/ԻԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում (հետայսու՝ Ընթացակարգ) «Լենտեքս» ՍՊԸ-ն 28-րդ չափաբաժնով զբաղեցրել է 1-ին տեղը, որը 300 զույգ կիսաբամբակյա կիսագուլպա էր, ընդամենը 45 000 ՀՀ դրամ արժողությամբ:

Սակայն, երբ Պատվիրատուն հայտարարել է ՀՀ ՊԵԿ եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ, պարզվել է, որ «Լենտեքս» ՍՊԸ-ն 26.04.2019թ. դրությամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Հայտը ներկայացնելուց առաջ Ընկերությունն առաջնորդվել է taxservice.am կայքում տեղադրված հարկային պարտավորություններ բաժնի անձնական քարտի քաղվածքով, որի համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել:

Տվյալ ամսում «Լենտեքս» ՍՊԸ-ում հարկային ստուգումներ էին կատարվել, վերլուծության արդյունքում փոխադարձ ճշգրտումների փուլում էր: Համակարգը դեռ չէր աշխատում: Քանիցս էլեկտրոնային նամակագրությամբ Ընկերությունը դիմել է հարկային մարմին՝ տեխնիկական խնդիրը լուծելու համար, որը սակայն կարգավորվել է մայիսի 13-ին, վերջնական ճշգրտումներից հետո վճարվել է (նամակագրությունը կցվել է):

Հարկային պարտավորությունները 17.06.2019թ. դրությամբ 0 ՀՀ դրամ է: իսկ դեբիտորական մնացորդը ԱԱՀ-ի մասով՝ 27 282 555 ՀՀ դրամ:

Ընկերությունը հանդիսանում է կարգապահ, խոշոր հարկատու:

Ընկերությունը նմանատիպ բազմաթիվ պայմանագրեր է կնքել ու անվերապահորեն կատարել իր պարտավորությունները:

Եթե պարզ լիներ պարտավորությունը, համակարգի հետ խնդիրներ չլինեին, ապա Ընկերությունը նման խնդիր չէր ունենա:

Ընկերությունը խնդրել է նկատի ունենալ 02.05.2019թ. N 516-Ն որոշման 48-րդ կետի 1-ին ենթակետը, համաձայն որի եթե կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը վերաբերում է՝հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցած ժամկետանց հարկային պարտավորություններին, ապա անհամապատասխանությունը համարվում է շտկված, եթե մասնակիցը ներկայացնում է կոմիտեի տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

Ընկերությունը խնդրել է իրեն չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Լենտեքս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/91 ընթացակարգի շրջանակներում 19.06.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ոստիկանության զորքերի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանության զորքերը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.06.2019թ. թիվ 01.2/14241-19 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար 22.04.2019թ. հայտարարված «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-19/10/ԱԲ/5/ԻԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լենտեքս» ՍՊԸ-ի վերաբերյալ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտե իրականացվել է հարցում: Նույն որոշման 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կողմից 14.05.2019թ. ստացված եզրակացության արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 5 803 287 ՀՀ դրամ ժամկետանց

հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով թույլատրելի շեմը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/91 ընթացակարգի շրջանակներում 19.06.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/91 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/91 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ոստիկանության զորքերի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/10/ԱԲ/5/ԻԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 26.04.2019թ. հայտ է ներկայացրել «Լենտեքս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լենտեքս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 14.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Լենտեքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 5 803 287 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ 26/9726-2019 գրությունը, ՀՀ ոստիկանության զորքերի 07.06.2019թ. թիվ 01.2/14241-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանութ-յան մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման

համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ոստիկանության զորքերի կողմից իր կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/10/ԱԲ/5/ԻԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 26.04.2019թ. հայտ ներկայացրած «Լենտեքս» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.04.2019թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ

կետի հիման վրա 14.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Լենտեքս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 5 803 287 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Լենտեքս» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «Լենտեքս» ՍՊԸ-ի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «online_support@taxservice.am» էլեկտրոնային փոստերի միջև էլեկտրոնային նամակագրությունը, որի համաձայն՝ Ընկերությունը 30.04.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտեին հայտնել է, որ 31.03.2019թ. մինչև նշված ամսաթիվը Taxservice համակարգում հարկային պարտավորություններ բաժնում չի արտացոլվում «Լենտեքս» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների շարժը:

Նույն էլ. նամակով Ընկերությունը խնդրել է ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված խնդիրը կարգավորելու և հարկային օրենսգրքով սահմանված հարկատուի իրավունքները լիարժեք կատարելու համար:

«online_support@taxservice.am» էլեկտրոնային փոստից ստացվել է նամակ, որի համաձայն՝ խնդիրը փոխանցվել է տեխ. պատասխանատուներին և ընթացքի մասին Ընկերությանը տեղյակ կպահվի:

Միևնույն ժամանակ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 25.06.2019թ. թիվ 6-2/32639-2019 գրությունը, համաձայն որի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հայտնել է, որ **26.04.2019թ. (հայտը ներկայացնելու օր) «Լենտեքս» ՍՊԸ-ի անձնական հաշվի քարտերն անհասանելի են եղել և՛ հարկ վճարողի, և՛ հարկային մարմնի աշխատակիցների համար, հետևաբար հարկ վճարողը հնարավորություն չի ունեցել դիտելու և արտածելու իր հարկային պարտավորությունները:**

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Լենտեքս» ՍՊԸ-ն «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԱՊՁԲ-19/10/ԱԲ/5/ԻԾ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վերոհիշյալ գրության համաձայն, Ընկերության անձնական հաշվի քարտերն անհասանելի են եղել և «Լենտեքս» ՍՊԸ-ի, և հարկային մարմնի աշխատակիցների համար, հետևաբար հարկ վճարողը հնարավություն չի ունեցել դիտելու և արտածելու իր հարկային պարտավորություններ, ուստի նաև Ընկերությունը օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել նաև սահմանված ժամկետներում կատարելու իր հարկային պարտավորությունները: Գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2019թ. թիվ 26/9726-2019 գրությամբ «Լենտեքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**